



ՀԱՐԱՎԱՅԻՆ ԵՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՅ ՀԱՅՐԱՊԵՏԱԿՈՆ ՊԵՏԱԿԻՐԵԿ ԳԵՐԱՊԵՏԻՎ Տ. ՍԻՈՆ ԵՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԵՆՈՒԿՆԵՐԸ ՎՐԱՍՏՆԻ ԹԵՄՈՒՄ

Սեպտեմբերի 29-ին Հարավային Ամերիկայի Հայոց Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը մեկնեց Թրիլիսի՝ Վերացման Ս. Խաչի տոմարի առթիվ սուրբ պատարագի մատուցմամբ և բանին կենաց բարոգությամբ հոգեպես մխիթարելու համար հավատացյալ ժողովրդին: Սրբազան հորն ուղեկցում էին Բուենոս-Այրեսից որպես ուխտավոր-Մայր Աթոռ ժամանած պ. Պողոս Գաղչյանը և հոգեշնորհ Տ. Նզիշե արեղա Սարգսյանը:

Արարատյան դաշտի աշնանային գեղեցիկ օրերից մեկն էր, ճանապարհորդությունը՝ հաճելի: Առավոտյան ժամը 9-ին մեկնեցին Վաղարշապատից: Մեր ինքնաշարժը մեծ արագությամբ սուրում էր ներկվան տանող խճուղով, որի երկու կողմերում տարածվում են անձադածիր պտղատու այգիներն ու բանջարանոցները: Մինչև նրան մեզ ուղեկցում են աստվածաշնչական Արարատը և քառագագաթ Արագածը: Հայրենասեր սրբազանը, շնչած իր հանդարտ ու մեղմ բնավորության, ոգևորվում էր հայրենի հրաշալի բնության գեղեցկություններով և իր վարակիչ խանդավառությամբ ոգևորում նաև մեզ: Նրանք արդեն վաղուց մեր հունն էինք թողել: Ավտոմեքենան սուրում էր դեպի կապույտ Սևանը: Նորից սրբազանն է խոսում: Նա բացատրություններ է տալիս ուխտավոր պ. Պողոս Գաղչյանին հայրենի գեղատեսիլ ու նվիրական վայրերի մասին: Ահա և Սևանը, փռված մեր նայվածքի առաջ, կղզին իր մենաստանով, ստորերկրյա էլեկտրակայանը, որը կառուցված է արդիական սարքավորումով և լույս ու կյանք է տալիս մեր հայրենի թաղամայրի գործարանների, բաղաճների ու գյուղերի:

Մեր ավտոմեքենան անցնում է լճի ափով և ուղղվում դեպի գեղեցիկ ու անտառապատ Դիլիջանը, որը հայտնի է իր առողջարաններով, հանգստյան տներով և հանքային ջրերով: Անկարելի է տեսնել Դիլիջանի և Իջևանի կուսական անտառների գեղեցկությունը, փարթամ բուսականությունը և չքզալ հայրենի բնության քաղցրությունը: Ճանապարհը անցնում է անտառների, արոտավայրերի միջով, կտրելով հայրենի ծաղկուն տարածությունները:

Ժամը 5-ին հասանք Թրիլիսի: Կուր գետի ափերին գեղեցկորեն փռված է պատմական քաղաքը: Հայ և վրաց ժողովուրդների բարեկամությունը խորունկ անցյալ ունի: Թրիլիսին եղել է հայ մշակույթի կարևոր կենտրոններից մեկը: Այսօր էլ հայկական մշակութային կյանքը այնտեղ կազմակերպված է և բարգավաճ: Թրիլիսիում կան հայկական միջնակարգ դպրոցներ, մշակույթի տուն, եկեղեցիներ և հայկական թատրոն:

Շաբաթ երեկո է: Հավատացյալների մի մեծ բաղմունք հավաքվել է եկեղեցի: Պատշաճ հանգիստավորությամբ, «Հյուրափառ»-ով, քահանա հայրերի, սարկավազների և կույսերի ու դպիրների առաջնորդությամբ գերաշնորհ սրբազան հայրը մտնում է Թրիլիսիի հայոց առաջնորդանիստ Մայր եկեղեցին:

Սրբազանը իր ուխտը կատարեց եկեղեցում, օրհնեց հավատացյալներին: Ապա սկսվեց կիրակամտի ժամերգությունը: Թրիլիսիում տեղեկացանք, որ վրահայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Վարդան եպիսկոպոս Տեր-Սահակյանը, իր օգնական հոգեշնորհ Տ. Վահան արեղա Գալամդարյանի ուղեկցությամբ, թեմական այցելությամբ մեկնած էր Ախալցխայի շրջանը:

Կիրակի, 30-ը սեպտեմբերի Հին տոմարով՝ Խաչի վերացման տոնը: Թրիլիսիի Հայոց Մայր Եկեղեցում Հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը: Հավատացյալների հոծ բազմություն ներկա էր սուրբ պատարագին: Երգեցողությունները կատարվեցին ներգաշնակ: «Հայր մեր»-ից առաջ քարոզեց պատարագիչ սրբազանը՝ «Այլ ինձ քու լիցի պարծել, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով ինձ աշխարհ ի խաչ կլեալ է, և ես՝ աշխարհի» բնարանով (Գաղատ., 2 14): Սրբազանը իր քարոզի սկզբում հաղորդեց ժողովրդին նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի օրհնությունները և խրատեց հավատացյալ ժողովրդին էլ՝ ավելի սերտ կերպով համախմբվել մեր Ս. Եկեղեցու շուրջը, Վեհափառ Հայրապետի և Ս. Էջմիածնի շուրջը, որովհետև մեր օրերում Հայաստանյայց Եկեղեցին ոտք է դրել վերածաղկման մի նոր փուլի մեջ, որի համար ամեն մի դիտակից հայ հավատացյալ պարտավոր է մաքուր ձեռքերով ու մաքուր սրտով մոտենալ մեր Ս. Եկեղեցու նվիրական խորաններին: Սրբազանը Թրիլիսիի հայ ժողովրդին ողջույններ հաղորդեց հեռավոր Հարավային Ամերիկայի հայրենասեր և հայրենակարոտ հայության կողմից: Ապա սրբազանը բացատրեց խաչի տոնի իմաստն ու խորհուրդը շատ պարզ և հասկանալի կերպով, առհասարակ քրիստոնեության և մասնավորաբար հայ ժողովրդի համար: Սրբազանի զեղեցիկ և բովանդակալից քարոզը լավեց մեծ հետաքրքրություն: Իր խրախուսիչ և ոգևորիչ խորհուրդներով սրբազանը հայրենասիրության և եկեղեցասիրության կրակը բորբոքեց հավատացյալների սրտում, թողնելով

անմոռանալի հիշատակ Թրիլիսիի հայության հոգու և հիշողության մեջ:

Առաջնորդարանից մեկնելիս նորին Սրբազնությունը երբ տեղավորվեց ինքնաշարժի մեջ, ժողովուրդը հարգանքով ու սիրով շրջապատեց նրան, ավելի երկար վաչիկլու համար նրա ներկայությունը: Սրբազանը նորից օրհնեց բոլորին և հրաժեշտ տալով ժողովրդական խանդավառ ու սրբատաղին բարեմաղթությունների մեջ:

Երեկոյան սրբազանը ներկա եղավ Թրիլիսիի հայոց թատրոնում «Սամվել» ներկայացմանը: Մեծանուն վիպասան Բաֆու համանուն վեսլը թատրոնի է վերածել երիտասարդ ու շնորհալի թատերագիր Բենիկ Մեյրամյանը: Նորին Սրբազնությունը թատրոնի տնօրենի հետ ունեցած զրույցի ժամանակ տեղեկացավ, որ այս տարվա համար 40-րդ անգամ լինելով բեմադրվում է «Սամվել»-ը: Հայոց թատրոնում եղած ժամանակ շատ-շատերը մոտեցան՝ լսելու սրբազան հոր հայրենասիրական խոսքերն ու ստանալու նրա օրհնությունը: Սրբազանը մեծ գնահատական տվավ թատրոնի արվեստագետներին, նրանց կատարողական բարձր արվեստի համար:

Հոկտեմբերի 1-ի առավոտյան մենք թողնեցինք Վրաստանի մայրաքաղաքը լավագույն և անմոռանալի տպավորություններով: Հոգեկան մխիթարության առիթներ եղան Թրիլիսիի եկեղեցասեր և հայրենասեր հայության համար գերապատիվ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանի այցելության օրերը, մատուցած սուրբ պատարագը և կրոնաբույր ու հայաշունչ քարոզը:

Խաղաղ երեկոն իջել էր Արարատյան դաշտի վրա, երբ հասանք Մայր Աթոռ:

ՆԴԻՇՆ ԱՐԵՂԱ ՍԱՐԴՍՅԱՆ

